

Կ-437-30.12.2019-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի ՀՕ-528-Ն քրեական օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 226.2-րդ հոդվածով.

«Հոդված 226.2. Բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը

1. Անձի կամ անձանց խմբի նկատմամբ սեռով, ռասայով, մաշկի գույնով, էթնիկական, կամ սոցիալական ծագումով, գենետիկական հատկանիշներով, լեզվով, կրոնով, աշխարհայացքով, քաղաքական կամ այլ հայացքներով, ազգային փոքրամասնությանը պատկանելությամբ, գույքային վիճակով, ծնունդով, հաշմանդամությամբ, տարիքով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասով, 226-րդ, 226.1-րդ, 301-րդ, 385-րդ, 397.1-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշները՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրիսնապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից

2) պաշտոնական դիրքն օգտագործելով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրիսնապատիկից երեքհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ

որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՄՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Սակայն, պրակտիկայում շատ հաճախ վերոնշյալ իրավունքը բացարձականացվում է, և դրա արդյունքում՝ խոսքի միջոցով կարծիքի ազատության իրավունքն անձանց կողմից օգտագործվում է նաև ի վնաս հասարակության, նրա անդամների շահերի և բարօրության, ոտնահարվում են առանձին անձանց իրավունքներն ու արժանապատվությունը: Այդ պատճառով միջազգային փաստաթղթերը և դրանց հիման վրա պետությունների օրենսդրությունները նախատեսում են խոսքի ազատության իրավունքի սահմանափակման օրենսդրական հնարավորություններ, այն դեպքերում, երբ խոսքի ազատության իրավունքը վերաճում է «ատելության խոսքի»:

Այսպես՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» **Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 10-րդ հոդվածի համաձայն՝**

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից:

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքի համաձայն «ատելության խոսքը» դուրս է Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավական պաշտպանության շրջանակներից, քանի որ դրսևորվում է 17-րդ հոդվածի (այն է՝ իրավունքների չարաշահման արգելումը) խախտմամբ և հակասում է Եվրոպական կոնվենցիայի հիմքում դրված հիմնարար սկզբունքներին: Այս

համատեքստում հարկ է նշել, որ Դելֆի ԱՍ-ն ընդդեմ Էստոնիայի գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ գրպարտիչ և այլ՝ ակնհայտորեն ոչ իրավաչափ խոսքը, այդ թվում նաև՝ ատելության խոսքը և բռնություն հրահրող կոչերը կարող են վայրկյանների ընթացքում աշխարհով մեկ տարածվել ավելի արագ, քան նախկինում երբևէ տարածվել են, իսկ երբեմն նույնիսկ կայուն մնալ համացանցում: Գիտակցելով Կոնվենցիայի հիմքում ընկած արժեքների պաշտպանության անհրաժեշտությունը և հաշվի առնելով այն, որ Կոնվենցիայի 10-րդ և 8-րդ հոդվածներով ամրագրված իրավունքները արժանի են հավասար հարգանքի, անհրաժեշտ է այս երկուսը հավասարակշռել այնպես, որ դրանց էությունը պահպանվի: Այսպիսով, չնայած Եվրոպական դատարանը ճանաչում է այն հանգամանքը, որ խոսքի ազատության իրացման տեսանկյունից համացանցը կարևոր առավելություններ է տալիս, այն նաև հաշվի է առնում, որ գրպարտիչ կամ այլ անօրինական բովանդակության համար պատասխանատվությունը պետք է սկզբունքորեն պահպանվի և հանդիսանա անձնական իրավունքների խախտման համար արդյունավետ միջոց¹:

Ընդհանուր առմամբ դեմ չլինելով բռնության հրահրման դեմ քրեաիրավական պայքարին՝ այդուհանդերձ Եվրոպական դատարանը հարցի առնչությամբ մի շարք գործերով ցուցաբերել է անհատական մոտեցում՝ շեշտադրելով հետևյալ հանգամանքները.

1. հանրության վրա ազդեցության աստիճանը.
2. իրական վտանգի առկայությունը².
3. բռնություն հրահրողի դիրքը հասարակության մեջ³.
4. բռնության կոչերի հասցեատերերը.
5. բռնության կոչերի ձևն ու բովանդակությունը³:

«Ատելության խոսքի» վերաբերյալ Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R (97) 20 հանձնարարականի 2-րդ սկզբունքի համաձայն՝ անդամ պետությունների կառավարությունները պետք է ստեղծեն կամ պահպանեն ատելության բորբոքման դեմ պայքարի այնպիսի ամուր իրավական հիմքեր, որոնք յուրաքանչյուր դեպքում կապահովեն անհրաժեշտ հավասարակշռությունը խոսքի ազատության և այլոց իրավունքների և արժանապատվության պաշտպանության միջև⁴:

Ռասիզմի և այլատյացության որոշ ձևերի և արտահայտությունների դեմ պայքարի մասին ԵՄ շրջանակային որոշման մեջ նշված է, որ անդամ պետությունները պետք է պատիժ նախատեսեն բռնության կամ ատելության դիտավորյալ և հրապարակային հրահրման, ինչպես նաև միջազգային որոշ հանցագործությունների հրապարակային թողություն, ժխտման կամ այն սովորական երևույթ դարձնելուն, ինչը կարող է հանգեցնել բռնության կամ ատելության⁵:

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի Եվրոպական հանձնաժողովի «ատելության խոսքի» դեմ պայքարի թիվ 15 հանձնարարականի համաձայն՝ «ատելության խոսքը» կարող է հանգեցնել այլոց ահաբեկման, նրանց նկատմամբ բռնության կիրառման, թշնամանքի և

¹ Տե՛ս Դելֆի ԱՍ-ն ընդդեմ Էստոնիայի (Delfi AS v. Estonia) գործով 2015 թվականի հունիսի 16-ի վճիռը, գանգատ թիվ 64569/09, կետեր 110, 157-159 (հայերեն թարգմանությամբ):

² Տե՛ս, mutatis mutandis, Case of Sürek v. Turkey (No. 1) (Application no. 26682/95) 8 July 1999, Case of Sürek v. Turkey (No. 3) (Application no. 24735/94) 8 July 1999, Protecting the right to freedom of expression under the European convention on human rights <https://rm.coe.int/handbook-freedom-of-expression-eng/1680732814> էջեր 23-25:

³ Տե՛ս, Harris, O'Boyle and Warbrick, Law of the European Convention on Human Rights, Oxford University Press 2018, էջ 607:

⁴ Տե՛ս <https://rm.coe.int/1680505d5b>

⁵ Տե՛ս <https://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:L:2008:328:0055:0058:EN:PDF>

խտրականության: Վերոնշյալ հանձնարարականում բազմիցս արտահայտվել է այն դիրքորոշումը, որ քրեական պատասխանատվությունը պետք է կիրառվի «ատելության խոսքի» ծայրահեղ դրսևորման համար: Մասնավորապես՝ քրեական պատասխանատվության միջոցները անհրաժեշտ են այն դեպքերում, երբ ատելության խոսքն ուղղված է բռնության, սպառնալիքի, թշնամանքի կամ խտրականության հարուցմանը որոշակի խումբ անձանց նկատմամբ⁶:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի անարգել կերպով հավատարիմ մնալ իր կարծիքներին:

2. Յուրաքանչյուր մարդ ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է, անկախ պետական սահմաններից, բանավոր, գրավոր կամ մամուլի միջոցով կամ էլ գեղարվեստական ձևով արտահայտված կամ մի այլ ձևով սեփական ընտրությամբ ամեն տեսակի ինֆորմացիա ու գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նախատեսված իրավունքներից օգտվելը դնում է հատուկ պարտականություններ և հատուկ պատասխանատվություն: Հետևաբար, այն կապված է որոշ սահմանափակումների հետ, սակայն, պետք է սահմանվեն օրենքով և լինեն անհրաժեշտ.

ա/ այլ անձանց իրավունքներն ու հեղինակությունը հարգելու համար.

բ/ պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանության համար»:

Վերոնշյալ դաշնագրի 20-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության օգտին որևէ ելույթ, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության սադրանք, պետք է արգելվի օրենքով»:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ևս նախատեսված է անձի կողմից իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի սահմանափակման հնարավորություն: Մասնավորապես, Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը: (...)

3. Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»: Վերոշարադրյալից հետևում է, որ «ատելության խոսքը» դուրս է խոսքի ազատության իրավունքի շրջանակներից: Թեև միջազգային իրավունքում, առկա է «ատելության խոսք» հասկացության համընդհանուր ճանաչում գտած ձևակերպում և այն տարբեր կերպ է ընկալվում ազգային և միջազգային մակարդակներում և տարբեր դրսևորումներ կարող է ունենալ, այնուամենայնիվ անվիճելի է, որ անձի կամ անձանց խմբի նկատմամբ սեռով, ռասայով, մաշկի գույնով, էթնիկական, կամ սոցիալական ծագումով, գենետիկական

⁶ Տե՛ս <https://rm.coe.int/ecri-general-policy-recommendation-no-15-on-combating-hate-speechruss/16808b5b07>

հատկանիշներով, լեզվով, կրոնով, աշխարհայացքով, քաղաքական կամ այլ հայացքներով, ազգային փոքրամասնությանը պատկանելությամբ, գույքային վիճակով, ծնունդով, հաշմանդամությամբ, տարիքով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը հանդիսանում է «ատելության խոսքի» ծայրահեղ դրսևորում:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ աշխարհի շատ երկրներում քրեականացված են բռնության կոչերի տարբեր դրսևորումները.

1. Պետության սահմանադրական կարգի դեմ ուղղված կոչեր (Բուլղարիա, Շվեյցարիա, Իսրայել, Սլովենիա, Լատվիա, Չեռնանիա, Սերբիա, Ֆրանսիա, Ուկրաինա, Բելառուս, ՌԴ):

2. Տեռորիստական կամ էքստրեմիստական գործունեության կատարմանն ուղղված կոչեր (Իսրայել, Սլովակիա, Լատվիա, Էստոնիա, Չեխիա, Սերբիա, ՌԴ):

3. Ցանկացած տեսակի հանցագործությունների կատարմանն ուղղված կոչեր (Բուլղարիա, Լեհաստան, Հոլանդիա, Չեռնանիա, Չեխիա):

4. Տարբեր խմբերի միջև բռնության հրահրմանն ուղղված կոչեր (Ֆրանսիա, Ուկրաինա, Բուլղարիա, Լեհաստան, Մոլդովա):

Ներկայումս ՀՀ քրեական օրենսգրքում պատասխանատվություն է նախատեսված միայն որոշ հանցագործություններ կատարելու հրապարակային կոչերի, դրանք արդարացնելու կամ քարոզելու համար: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասում քրեական պատասխանատվություն է նախատեսված զանգվածային անկարգությունների ժամանակ իշխանության ներկայացուցչի օրինական պահանջին ակտիվորեն չենթարկվելու կամ անձանց նկատմամբ բռնություն կիրառելու կոչերի համար, 225.1-րդ հոդվածի 2-րդ մասում՝ հավաքը դադարեցնելու վերաբերյալ ոստիկանության ներկայացուցչի օրինական որոշմանը չենթարկվելուն ուղղված կոչերի համար, 226.1-րդ հոդվածում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 217-րդ, 217.1-ին կամ 389-րդ հոդվածներով նախատեսված հանցանքներ կատարելու հրապարակային կոչերի, այդ հանցանքների կատարումը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու համար, եթե առաջացել է նշված հանցանքները կատարելու իրական վտանգ, 301-րդ հոդվածում՝ իշխանությունը զավթելուն, տարածքային ամբողջականությունը խախտելուն կամ սահմանադրական կարգը բռնի տապալելուն ուղղված հրապարակային կոչերի համար, 385-րդ հոդվածում՝ ագրեսիվ պատերազմ սանձազերծելու հրապարակային կոչերի համար, 397.1-րդ հոդվածում՝ համակարգչային համակարգի միջոցով հանրությանը նյութեր տարածելու կամ որևէ այլ ձևով մատչելի դարձնելու միջոցով ցեղասպանությունը և խաղաղության ու մարդկության անվտանգության դեմ ուղղված ՀՀ քրեական օրենսգրքի 33-րդ գլխի մյուս հոդվածներով նախատեսված հանցագործությունները հերքելու, մեղմացնելու, հավանություն տալու կամ արդարացնելու համար, եթե դա կատարվել է ռասայական պատկանելության, մաշկի գույնի, ազգային կամ էթնիկական ծագման կամ կրոնական պատկանելության հիման վրա՝ անձի կամ անձանց խմբի նկատմամբ ատելություն, խտրականություն կամ բռնություն հրահրելու նպատակով:

Կարծում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքում առկա կարգավորումները բավարար չեն անձանց կյանքի և առողջության, անձնական ազատության, սեռական անձեռնմխելիության և

սեռական ազատության պաշտպանության համար ամուր երաշխիքներ ապահովելու տեսանկյունից, ուստի վերը թվարկված արժեքների պաշտպանության և հանցագործությունների կանխարգելման համար անհրաժեշտ քրեաիրավական երաշխիք ստեղծելու, «բռնության կոչերի» աճը կանխարգելելու նպատակով՝ անձի կամ անձանց խմբի նկատմամբ սեռով, ռասայով, մաշկի գույնով, էթնիկական, կամ սոցիալական ծագումով, գենետիկական հատկանիշներով, լեզվով, կրոնով, աշխարհայացքով, քաղաքական կամ այլ հայացքներով, ազգային փոքրամասնությանը պատկանելությամբ, գույքային վիճակով, ծնունդով, հաշմանդամությամբ, տարիքով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու համար, եթե բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասով, 226-րդ, 226.1-րդ, 301-րդ, 385-րդ, 397.1-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշները, պետք է նախատեսվի ինքնուրույն քրեական պատասխանատվություն:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Նախագծով առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգիրքը լրացնել 226.2-րդ հոդվածով, որով պատասխանատվություն կնախատեսվի անձի կամ անձանց խմբի նկատմամբ սեռով, ռասայով, մաշկի գույնով, էթնիկական, կամ սոցիալական ծագումով, գենետիկական հատկանիշներով, լեզվով, կրոնով, աշխարհայացքով, քաղաքական կամ այլ հայացքներով, ազգային փոքրամասնությանը պատկանելությամբ, գույքային վիճակով, ծնունդով, հաշմանդամությամբ, տարիքով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու համար, եթե բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասով, 226-րդ, 226.1-րդ, 301-րդ, 385-րդ, 397.1-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշները:

ՀՀ քրեական օրենսգրքի հիմնական և առաջնային խնդիրներից է հանցավոր ոտնձգություններից մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների, այդ թվում նաև՝ կյանքի և առողջության, անձնական ազատության, սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության պաշտպանությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն, որ Նախագծով առաջարկվող հանցակազմում նախատեսված արարքները, հանդիսանում են «ատելության խոսքի» ծայրահեղ դրսևորումներ և օժտված են հանրային բարձր վտանգավորությամբ, գտնում ենք, որ դրանք կատարելու համար պետք է նախատեսել քրեական պատասխանատվություն:

Հարկ է նշել, որ Վճռաբեկ դատարանն իր 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԱՐԴ/0179/01/11 որոշման մեջ արձանագրել է, որ *բռնությունը՝ որպես քրեորեն հետապնդելի արարք, դիտավորությամբ, անձի կամ քիմ հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք է, որի արդյունքում անձը զրկվել է կյանքից, կամ սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք:*

Պետք է նշել, որ **կոչեր ասելով** պետք է հասկանալ անձանց գիտակցության և կամքի վրա այնպիսի ազդեցություն, որն **ուղղված է** անձի կամ անձանց խմբի նկատմամբ բռնություն

գործադրելուն:

Արդարացնել ասելով պետք է հասկանալ անձի կամ անձանց խմբի նկատմամբ բռնություն գործադրելու դեպքերի, ինչպես նաև բուն գաղափարի **ընդունում և պաշտպանություն** կամ նման բռնություն գործադրած անձանց արդարացում և պաշտպանություն: Այլ կերպ ասած՝ նշված դեպքերում անձը հայտարարում է, որ նման բռնությունը համարվում է ճիշտ, ենթակա է պաշտպանության և ընդօրինակման:

Քարոզ ասելով պետք է հասկանալ անձի կամ անձանց խմբի նկատմամբ բռնության գործադրելուն ուղղված գաղափարների **տարածումը**: Հարկ է նշել, որ որպես քարոզ չի կարող դիտվել բռնություն գործադրելուն ուղղված գաղափարների տարածումը մեկ անձի մոտ: Անձի արարքը քարոզ դիտարկելու համար անհրաժեշտ է, որ գաղափարների տարածումը կատարվի մեկից ավելի անձանց շրջանակներում:

Պետք է արձանագրել, որ քննարկվող արարքներից յուրաքանչյուրը կարող է ունենալ տարբեր դրսևորումներ, սակայն Նախագծով առաջարկվող հանցակազմի առկայության համար դրանք պարտադիր պետք է լինեն **հրապարակային**, այլ կերպ ասած՝ արարքներից յուրաքանչյուրում պարունակվող տեղեկատվությունը պետք է լսելի և ընկալելի լինի անձանց լայն շրջանակի համար (խումբ, ամբոխ):

Անհրաժեշտ է ընդգծել, որ Նախագծով առաջարկվող ՀՀ քրեական օրենսգրքի 226.2-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը առկա կլինի միայն այն դեպքում, երբ հոդվածում նշված արարքները կատարվեն որոշակի հանգամանքներով պայմանավորված և բացակայեն 226.2-րդ հոդվածում թվարկված հանրային ավելի մեծ վտանգավորություն ունեցող հանցակազմերը:

Այսինքն, Նախագծով առաջարկվում է քրեական պատասխանատվություն նախատեսել ոչ թե ցանկացած «բռնության կոչի», այլ միայն հանցակազմում թվարկված հանգամանքներով պայմանավորված «բռնության կոչերի» համար:

Միաժամանակ, մշակույթի, գիտության, գրականության և արվեստի ստեղծագործություններում առկա բռնություն պարունակող կամ բռնության նմանվող արտահայտությունները, ինչպես նաև նման ստեղծագործությունների տարածումը բռնության կամ բռնություն գործադրելու կոչ, բռնությունը հրապարակայնորեն արդարացնել կամ քարոզել չեն կարող համարվել, և այդ արարքները չպետք է մեկնաբանվեն այս հոդվածի համատեքստում:

Հարկ է նշել, որ առաջարկվող հանցակազմը ձևական է. ավարտված հանցագործություն համարվելու համար բավական է հոդվածում նկարագրված արարքներից որևէ մեկի կատարումը:

Հարկ է նշել, որ «բռնության կոչերի» հանցակազմը մի շարք երկրներում նախատեսված է որպես ձևական հանցակազմ⁷:

Նախագծով որպես քննարկվող հանցակազմի ծանրացնող հանգամանքներ առաջարկվում է նախատեսել արարքը մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից կատարելը և պաշտոնեական դիրքն օգտագործելով կատարելը:

⁷ Տե՛ս, ի թիվս այլոց, Բուլղարիայի քրեական օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասը https://www.legislationline.org/download/id/8395/file/Bulgaria_Criminal_Code_1968_am2017_ENG.pdf Նիդերլանդների քրեական օրենսգրքի 137c-րդ հոդվածը՝ https://www.legislationline.org/download/id/6415/file/Netherlands_CC_am2012_en.pdf Լեհաստանի քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածը՝ https://www.legislationline.org/download/id/7354/file/Poland_CC_1997_en.pdf Իսպանիայի քրեական օրենսգրքի 510-րդ հոդվածը՝ https://www.legislationline.org/download/id/6443/file/Spain_CC_am2013_en.pdf

Միաժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքում լրացվող 226.2-րդ հոդվածով նախատեսվող հանցագործությունների քննության քննչական ենթակայության հարցը որոշելու նպատակով՝ առաջարկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարել համապատասխան լրացում:

3.Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից:

4.Ակնկալվող արդյունքը

Առաջարկվող օրենսդրական փոփոխությունների պայմաններում չխախտելով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածով երաշխավորված կարծիքի արտահայտման ազատության իրավունքը՝ քրեական պատասխանատվություն կնախատեսվի անձի կամ անձանց խմբի նկատմամբ սեռով, ռասայով, մաշկի գույնով, էթնիկական, կամ սոցիալական ծագումով, գենետիկական հատկանիշներով, լեզվով, կրոնով, աշխարհայացքով, քաղաքական կամ այլ հայացքներով, ազգային փոքրամասնությանը պատկանելությամբ, գույքային վիճակով, ծնունդով, հաշմանդամությամբ, տարիքով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու համար, եթե բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասով, 226-րդ, 226.1-րդ, 301-րդ, 385-րդ, 397.1-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշները: Քննարկվող հանցակազմը նախատեսելու դեպքում անձանց կյանքի և առողջության, անձնական ազատության, սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության պաշտպանության և հանցագործությունների կանխարգելման համար կստեղծվի հավելյալ քրեաիրավական երաշխիք:

ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՄՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Սակայն, պրակտիկայում շատ հաճախ վերոնշյալ իրավունքը բացարձականացվում է, և դրա արդյունքում՝ խոսքի միջոցով կարծիքի ազատության իրավունքն անձանց կողմից օգտագործվում է նաև ի վնաս հասարակության, նրա անդամների շահերի և բարօրության, ոտնահարվում են առանձին անձանց իրավունքներն ու արժանապատվությունը: Այդ պատճառով միջազգային փաստաթղթերը և դրանց հիման վրա պետությունների օրենսդրությունները նախատեսում են խոսքի ազատության իրավունքի սահմանափակման օրենսդրական հնարավորություններ, այն դեպքերում, երբ խոսքի ազատության իրավունքը վերաճում է «ատելության խոսքի»:

Այսպես՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 10-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից:

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքի համաձայն «ատելության խոսքը» դուրս է Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավական պաշտպանության շրջանակներից, քանի որ դրսևորվում է 17-րդ հոդվածի (այն է՝ իրավունքների չարաշահման արգելումը) խախտմամբ և հակասում է Եվրոպական կոնվենցիայի հիմքում դրված հիմնարար սկզբունքներին: Այս համատեքստում հարկ է նշել, որ Դելֆի ԱՍ-ն ընդդեմ Էստոնիայի գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ զրպարտիչ և այլ՝ ակնհայտորեն ոչ իրավաչափ խոսքը, այդ թվում նաև՝ ատելության խոսքը և բռնություն հրահրող կոչերը կարող են վայրկյանների ընթացքում աշխարհով մեկ տարածվել ավելի արագ, քան նախկինում երբևէ տարածվել են, իսկ երբեմն նույնիսկ կայուն մնալ համացանցում: Գիտակցելով Կոնվենցիայի հիմքում ընկած արժեքների պաշտպանության անհրաժեշտությունը և հաշվի առնելով այն, որ Կոնվենցիայի 10-

րո՞ և 8-րդ հոդվածներով ամրագրված իրավունքները արժանի են հավասար հարգանքի, անհրաժեշտ է այս երկուսը հավասարակշռել այնպես, որ դրանց էությունը պահպանվի: Այսպիսով, չնայած Եվրոպական դատարանը ճանաչում է այն հանգամանքը, որ խոսքի ազատության իրացման տեսանկյունից համացանցը կարևոր առավելություններ է տալիս, այն նաև հաշվի է առնում, որ գրպարտիչ կամ այլ անօրինական բովանդակության համար պատասխանատվությունը պետք է սկզբունքորեն պահպանվի և հանդիսանա անձնական իրավունքների խախտման համար արդյունավետ միջոց⁸:

Ընդհանուր առմամբ դեմ չլինելով բռնության հրահրման դեմ քրեաիրավական պայքարին՝ այդուհանդերձ Եվրոպական դատարանը հարցի առնչությամբ մի շարք գործերով ցուցաբերել է անհատական մոտեցում՝ շեշտադրելով հետևյալ հանգամանքները.

1. հանրության վրա ազդեցության աստիճանը.
2. իրական վտանգի առկայությունը⁹.
3. բռնություն հրահրողի դիրքը հասարակության մեջ¹⁰.
4. բռնության կոչերի հասցեատերերը.
5. բռնության կոչերի ձևն ու բովանդակությունը³:

«Ատելության խոսքի» վերաբերյալ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R (97) 20 հանձնարարականի 2-րդ սկզբունքի համաձայն՝ անդամ պետությունների կառավարությունները պետք է ստեղծեն կամ պահպանեն ատելության բորբոքման դեմ պայքարի այնպիսի ամուր իրավական հիմքեր, որոնք յուրաքանչյուր դեպքում կապահովեն անհրաժեշտ հավասարակշռությունը խոսքի ազատության և այլոց իրավունքների և արժանապատվության պաշտպանության միջև¹¹:

Ռասիզմի և այլատյացության որոշ ձևերի և արտահայտությունների դեմ պայքարի մասին ԵՄ շրջանակային որոշման մեջ նշված է, որ անդամ պետությունները պետք է պատիժ նախատեսեն բռնության կամ ատելության դիտավորյալ և հրապարակային հրահրման, ինչպես նաև միջազգային որոշ հանցագործությունների հրապարակային թողտվության, ժխտման կամ այն սովորական երևույթ դարձնելուն, ինչը կարող է հանգեցնել բռնության կամ ատելության¹²:

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի Եվրոպական հանձնաժողովի «ատելության խոսքի» դեմ պայքարի թիվ 15 հանձնարարականի համաձայն՝ «ատելության խոսքը» կարող է հանգեցնել այլոց ահաբեկման, նրանց նկատմամբ բռնության կիրառման, թշնամանքի և խտրականության: Վերոնշյալ հանձնարարականում բազմիցս արտահայտվել է այն դիրքորոշումը, որ քրեական պատասխանատվությունը պետք է կիրառվի «ատելության խոսքի» ծայրահեղ դրսևորման համար: Մասնավորապես՝ քրեական պատասխանատվության միջոցները անհրաժեշտ են այն դեպքերում, երբ ատելության խոսքն ուղղված է բռնության, սպառնալիքի, թշնամանքի կամ խտրականության հարուցմանը որոշակի խումբ անձանց նկատմամբ¹³:

⁸ St`u Դելֆի ԱՄ-ն ընդդեմ Էստոնիայի (Delfi AS v. Estonia) գործով 2015 թվականի հունիսի 16-ի վճիռը, զանգատ թիվ 64569/09, կետեր 110, 157-159 (հայերեն թարգմանությամբ):

⁹ St`u, mutatis mutandis, Case of Sürek v. Turkey (No. 1) (Application no. 26682/95) 8 July 1999, Case of Sürek v. Turkey (No. 3) (Application no. 24735/94) 8 July 1999, Protecting the right to freedom of expression under the European convention on human rights <https://rm.coe.int/handbook-freedom-of-expression-eng/1680732814> էջեր 23-25:

¹⁰ St`u, Harris, O'Boyle and Warbrick, Law of the European Convention on Human Rights, Oxford University Press 2018, էջ 607:

¹¹ St`u <https://rm.coe.int/1680505d5b>

¹² St`u <https://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:L:2008:328:0055:0058:EN:PDF>

¹³ St`u <https://rm.coe.int/ecri-general-policy-recommendation-no-15-on-combating-hate-speechruss/16808b5b07>

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի անարգել կերպով հավատարիմ մնալ իր կարծիքներին:

2. Յուրաքանչյուր մարդ ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է, անկախ պետական սահմաններից, բանավոր, գրավոր կամ մամուլի միջոցով կամ էլ գեղարվեստական ձևով արտահայտված կամ մի այլ ձևով սեփական ընտրությամբ ամեն տեսակի ինֆորմացիա ու գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նախատեսված իրավունքներից օգտվելը դնում է հատուկ պարտականություններ և հատուկ պատասխանատվություն: Հետևաբար, այն կապված է որոշ սահմանափակումների հետ, սակայն, պետք է սահմանվեն օրենքով և լինեն անհրաժեշտ.

ա/ այլ անձանց իրավունքներն ու հեղինակությունը հարգելու համար.

բ/ պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանության համար»:

Վերոնշյալ դաշնագրի 20-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության օգտին որևէ ելույթ, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության սադրանք, պետք է արգելվի օրենքով»:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ևս նախատեսված է անձի կողմից իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի սահմանափակման հնարավորություն: Մասնավորապես, Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը: (...)

3. Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Վերոշարադրյալից հետևում է, որ «ատելության խոսքը» դուրս է խոսքի ազատության իրավունքի շրջանակներից: Թեև միջազգային իրավունքում, առկա է «ատելության խոսք» հասկացության համընդհանուր ճանաչում գտած ձևակերպում և այն տարբեր կերպ է ընկալվում ազգային և միջազգային մակարդակներում և տարբեր դրսևորումներ կարող է ունենալ, այնուամենայնիվ անվիճելի է, որ անձի կամ անձանց խմբի նկատմամբ սեռով, ռասայով, մաշկի գույնով, էթնիկական, կամ սոցիալական ծագումով, գենետիկական հատկանիշներով, լեզվով, կրոնով, աշխարհայացքով, քաղաքական կամ այլ հայացքներով, ազգային փոքրամասնությանը պատկանելությամբ, գույքային վիճակով, ծնունդով, հաշմանդամությամբ, տարիքով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը հանդիսանում է «ատելության խոսքի» ծայրահեղ դրսևորում:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ աշխարհի շատ երկրներում քրեականացված են բռնության կոչերի տարբեր դրսևորումները.

1. Պետության սահմանադրական կարգի դեմ ուղղված կոչեր (Բուլղարիա, Շվեյցարիա, Իսրայել, Սլովենիա, Լատվիա, Գերմանիա, Սերբիա, Ֆրանսիա, Ուկրաինա, Բելառուս, ՌԴ):

2. Տեռորիստական կամ էքստրեմիստական գործունեության կատարմանն ուղղված կոչեր (Իսրայել, Սլովակիա, Լատվիա, Էստոնիա, Չեխիա, Սերբիա, ՌԴ):

3. Ցանկացած տեսակի հանցագործությունների կատարմանն ուղղված կոչեր (Բուլղարիա, Լեհաստան, Հոլանդիա, Գերմանիա, Չեխիա):

4. Տարբեր խմբերի միջև բռնության հրահրմանն ուղղված կոչեր (Ֆրանսիա, Ուկրաինա, Բուլղարիա, Լեհաստան, Մոլդովա):

Ներկայումս ՀՀ քրեական օրենսգրքում պատասխանատվություն է նախատեսված միայն որոշ հանցագործություններ կատարելու հրապարակային կոչերի, դրանք արդարացնելու կամ քարոզելու համար: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասում քրեական պատասխանատվություն է նախատեսված զանգվածային անկարգությունների ժամանակ իշխանության ներկայացուցչի օրինական պահանջին ակտիվորեն չենթարկվելու կամ անձանց նկատմամբ բռնություն կիրառելու կոչերի համար, 225.1-րդ հոդվածի 2-րդ մասում՝ հավաքը դադարեցնելու վերաբերյալ ոստիկանության ներկայացուցչի օրինական որոշմանը չենթարկվելուն ուղղված կոչերի համար, 226.1-րդ հոդվածում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 217-րդ, 217.1-ին կամ 389-րդ հոդվածներով նախատեսված հանցանքներ կատարելու հրապարակային կոչերի, այդ հանցանքների կատարումը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու համար, եթե առաջացել է նշված հանցանքները կատարելու իրական վտանգ, 301-րդ հոդվածում՝ իշխանությունը զավթելուն, տարածքային ամբողջականությունը խախտելուն կամ սահմանադրական կարգը բռնի տապալելուն ուղղված հրապարակային կոչերի համար, 385-րդ հոդվածում՝ ագրեսիվ պատերազմ սանձազերծելու հրապարակային կոչերի համար, 397.1-րդ հոդվածում՝ համակարգչային համակարգի միջոցով հանրությանը նյութեր տարածելու կամ որևէ այլ ձևով մատչելի դարձնելու միջոցով ցեղասպանությունը և խաղաղության ու մարդկության անվտանգության դեմ ուղղված ՀՀ քրեական օրենսգրքի 33-րդ գլխի մյուս հոդվածներով նախատեսված հանցագործությունները հերքելու, մեղմացնելու, հավանություն տալու կամ արդարացնելու համար, եթե դա կատարվել է ռասայական պատկանելության, մաշկի գույնի, ազգային կամ էթնիկական ծագման կամ կրոնական պատկանելության հիման վրա՝ անձի կամ անձանց խմբի նկատմամբ ատելություն, խտրականություն կամ բռնություն հրահրելու նպատակով:

Կարծում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքում առկա կարգավորումները բավարար չեն անձանց կյանքի և առողջության, անձնական ազատության, սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության պաշտպանության համար ամուր երաշխիքներ ապահովելու տեսանկյունից, ուստի վերը թվարկված արժեքների պաշտպանության և հանցագործությունների կանխարգելման համար անհրաժեշտ քրեաիրավական երաշխիք ստեղծելու, «բռնության կոչերի» աճը կանխարգելելու նպատակով՝ անձի կամ անձանց խմբի նկատմամբ սեռով, ռասայով, մաշկի գույնով, էթնիկական, կամ սոցիալական ծագումով, գենետիկական հատկանիշներով, լեզվով, կրոնով, աշխարհայացքով, քաղաքական կամ այլ հայացքներով, ազգային փոքրամասնությանը

պատկանելությամբ, գույքային վիճակով, ծնունդով, հաշմանդամությամբ, տարիքով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու համար, եթե բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասով, 226-րդ, 226.1-րդ, 301-րդ, 385-րդ, 397.1-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշները, պետք է նախատեսվի ինքնուրույն քրեական պատասխանատվություն:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Նախագծով առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքը լրացնել 226.2-րդ հոդվածով, որով պատասխանատվություն կնախատեսվի անձի կամ անձանց խմբի նկատմամբ սեռով, ռասայով, մաշկի գույնով, էթնիկական, կամ սոցիալական ծագումով, գենետիկական հատկանիշներով, լեզվով, կրոնով, աշխարհայացքով, քաղաքական կամ այլ հայացքներով, ազգային փոքրամասնությանը պատկանելությամբ, գույքային վիճակով, ծնունդով, հաշմանդամությամբ, տարիքով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու համար, եթե բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասով, 226-րդ, 226.1-րդ, 301-րդ, 385-րդ, 397.1-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշները:

ՀՀ քրեական օրենսգրքի հիմնական և առաջնային խնդիրներից է հանցավոր ոտնձգություններից մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների, այդ թվում նաև՝ կյանքի և առողջության, անձնական ազատության, սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության պաշտպանությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն, որ Նախագծով առաջարկվող հանցակազմում նախատեսված արարքները, հանդիսանում են «ատելության խոսքի» ծայրահեղ դրսևորումներ և օժտված են հանրային բարձր վտանգավորությամբ, գտնում ենք, որ դրանք կատարելու համար պետք է նախատեսել քրեական պատասխանատվություն:

Հարկ է նշել, որ Վճռաբեկ դատարանն իր 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԱՐԴ/0179/01/11 որոշման մեջ արձանագրել է, որ *բռնությունը՝ որպես քրեորեն հետապնդելի արարք, դիտավորությամբ, անձի կամ քիմիկատային կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք է, որի արդյունքում անձը զրկվել է կյանքից, կամ սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք:*

Պետք է նշել, որ **կոչեր ասելով** պետք է հասկանալ անձանց գիտակցության և կամքի վրա այնպիսի ազդեցություն, որն **ուղղված է** անձի կամ անձանց խմբի նկատմամբ բռնություն գործադրելուն:

Արդարացնել ասելով պետք է հասկանալ անձի կամ անձանց խմբի նկատմամբ բռնություն գործադրելու դեպքերի, ինչպես նաև բուն գաղափարի **ընդունում և պաշտպանություն** կամ նման բռնություն գործադրած անձանց արդարացում և պաշտպանություն: Այլ կերպ ասած՝ նշված դեպքերում անձը հայտարարում է, որ նման բռնությունը համարվում է ճիշտ, ենթակա է պաշտպանության և ընդօրինակման:

Քարոզ ասելով պետք է հասկանալ անձի կամ անձանց խմբի նկատմամբ բռնության գործադրելուն ուղղված գաղափարների տարածումը: Հարկ է նշել, որ որպես քարոզ չի կարող դիտվել բռնություն գործադրելուն ուղղված գաղափարների տարածումը մեկ անձի մոտ: Անձի արարքը քարոզ դիտարկելու համար անհրաժեշտ է, որ գաղափարների տարածումը կատարվի մեկից ավելի անձանց շրջանակներում:

Պետք է արձանագրել, որ քննարկվող արարքներից յուրաքանչյուրը կարող է ունենալ տարբեր դրսևորումներ, սակայն Նախագծով առաջարկվող հանցակազմի առկայության համար դրանք պարտադիր պետք է լինեն **հրապարակային**, այլ կերպ ասած՝ արարքներից յուրաքանչյուրում պարունակվող տեղեկատվությունը պետք է լսելի և ընկալելի լինի անձանց լայն շրջանակի համար (խումբ, ամբոխ):

Անհրաժեշտ է ընդգծել, որ Նախագծով առաջարկվող ՀՀ քրեական օրենսգրքի 226.2-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը առկա կլինի միայն այն դեպքում, երբ հոդվածում նշված արարքները կատարվեն որոշակի հանգամանքներով պայմանավորված և բացակայեն 226.2-րդ հոդվածում թվարկված հանրային ավելի մեծ վտանգավորություն ունեցող հանցակազմերը:

Այսինքն, Նախագծով առաջարկվում է քրեական պատասխանատվություն նախատեսել ոչ թե ցանկացած «բռնության կոչի», այլ միայն հանցակազմում թվարկված հանգամանքներով պայմանավորված «բռնության կոչերի» համար:

[Միաժամանակ, մշակույթի, գիտության, գրականության և արվեստի ստեղծագործություններում առկա բռնություն պարունակող կամ բռնության նմանվող արտահայտությունները, ինչպես նաև նման ստեղծագործությունների տարածումը բռնության կամ բռնություն գործադրելու կոչ, բռնությունը հրապարակայնորեն արդարացնել կամ քարոզել չեն կարող համարվել, և այդ արարքները չպետք է մեկնաբանվեն այս հոդվածի համատեքստում:](#)

Հարկ է նշել, որ առաջարկվող հանցակազմը ձևական է. ավարտված հանցագործություն համարվելու համար բավական է հոդվածում նկարագրված արարքներից որևէ մեկի կատարումը:

Հարկ է նշել, որ «բռնության կոչերի» հանցակազմը մի շարք երկրներում նախատեսված է որպես ձևական հանցակազմ¹⁴:

Նախագծով որպես քննարկվող հանցակազմի ծանրացնող հանգամանքներ առաջարկվում է նախատեսել արարքը մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից կատարելը և պաշտոնական դիրքն օգտագործելով կատարելը:

Միաժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքում լրացվող 226.2-րդ հոդվածով նախատեսվող հանցագործությունների քննության քննչական ենթակայության հարցը որոշելու նպատակով՝ առաջարկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարել համապատասխան լրացում:

¹⁴ Տե՛ս, ի թիվս այլոց, Բուլղարիայի քրեական օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասը https://www.legislationline.org/download/id/8395/file/Bulgaria_Criminal_Code_1968_am2017_ENG.pdf Նիդերլանդների քրեական օրենսգրքի 137c-րդ հոդվածը՝ https://www.legislationline.org/download/id/6415/file/Netherlands_CC_am2012_en.pdf Լեհաստանի քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածը՝ https://www.legislationline.org/download/id/7354/file/Poland_CC_1997_en.pdf Իսպանիայի քրեական օրենսգրքի 510-րդ հոդվածը՝ https://www.legislationline.org/download/id/6443/file/Spain_CC_am2013_en.pdf

3.Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից:

4.Ակնկալվող արդյունքը

Առաջարկվող օրենսդրական փոփոխությունների պայմաններում չխախտելով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածով երաշխավորված կարծիքի արտահայտման ազատության իրավունքը՝ քրեական պատասխանատվություն կնախատեսվի անձի կամ անձանց խմբի նկատմամբ սեռով, ռասայով, մաշկի գույնով, էթնիկական, կամ սոցիալական ծագումով, գենետիկական հատկանիշներով, լեզվով, կրոնով, աշխարհայացքով, քաղաքական կամ այլ հայացքներով, ազգային փոքրամասնությանը պատկանելությամբ, գույքային վիճակով, ծնունդով, հաշմանդամությամբ, տարիքով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու համար, եթե բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասով, 226-րդ, 226.1-րդ, 301-րդ, 385-րդ, 397.1-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշները: Քննարկվող հանցակազմը նախատեսելու դեպքում անձանց կյանքի և առողջության, անձնական ազատության, սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության պաշտպանության և հանցագործությունների կանխարգելման համար կստեղծվի հավելյալ քրեաիրավական երաշխիք:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-437-30.12.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում և առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ (հիմնական հեղինակի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ նաև՝ Նախագիծ) 1-ին հոդված:	Նախագծի 1-ին հոդվածի վերնագրից և հոդվածից հանել «արդարացնելը կամ» բառերը:	Չի ընդունվել: Առաջարկին կից ներկայացված հիմնավորման համաձայն՝ «Նախագիծը չի սահմանում, թե ինչ է բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը, բացակայում է հանցագործության արտաքին դրսևորումների բնութագիրը: Պայմանավորված օբյեկտիվ կողմի բացակայությամբ և դրանով իսկ իրավական որոշակիության սկզբունքի խնդրահարույց լինելով՝ առաջարկում ենք նախագծի վերնագրից և հոդվածից հանել «արդարացնելը» բառերը:»:	Չի ընդունվել:

				<p>Այս առումով հարկ է նշել, որ Նախագծով առաջարկվող հանցակազմի դիսպոզիցիայում նկարագրված են արարքի հնարավոր արտաքին դրսևորումները (օբյեկտիվ կողմը). այն է՝ հանցակազմում թվարկված հանգամանքներով պայմանավորված</p> <ul style="list-style-type: none"> • բռնության հրապարակային կոչերը • նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը • կամ քարոզելը: <p>Միաժամանակ, անդրադարձնալով հանցագործության արտաքին դրսևորումների բնութագրի բացակայությանը՝ հարկ է նշել, որ հանցակազմի օբյեկտիվ կողմը քրեական օրենքով սահմանված որոշակի հանցագործության այնպիսի հատկանիշների համակցությունն է, որոնք բնութագրում են կոնկրետ հանցավոր ոտնձգության կատարման արտաքին</p>	
--	--	--	--	---	--

				<p>գործընթացը: Օբյեկտիվ կողմը պարունակում է միայն այնպիսի հատկանիշներ, որոնք բավարար են՝ ա) արարքի հանրային վտանգավորությունը նկարագրելու և բ) այն այլ հանցակազմերից սահմանազատելու, այսինքն՝ անհատականացնելու համար:</p> <p>Բացի այդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը: Այդ նպատակը բացահայտվում է հիմք ընդունելով Նախագծի ընդունման հիմնավորումը: Նախագծի ընդունման մեջ հստակ բացահայտված է «արդարացնել» հասկացության բովանդակությունը: Այսպես, արդարացնել ասելով պետք է հասկանալ անձի կամ անձանց խմբի նկատմամբ բռնություն գործադրելու դեպքերի, ինչպես նաև բուն</p>	
--	--	--	--	---	--

				<p>գաղափարի ընդունում և պաշտպանություն կամ նման բռնություն գործադրած անձանց արդարացում և պաշտպանություն: Այլ կերպ ասած՝ նշված դեպքերում անձը հայտարարում է, որ նման բռնությունը համարվում է ճիշտ, ենթակա է պաշտպանության և ընդօրինակման:</p> <p>Հարկ է նաև ընդգծել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 226.1 (Ահաբեկչության, ահաբեկչության ֆինանսավորման և միջազգային ահաբեկչության հրապարակային կոչերը, նշված հանցանքների կատարումը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը) և 397¹-ին (Ցեղասպանությունը և խաղաղության ու մարդկության անվտանգության դեմ ուղղված մյուս հանցագործությունները հերքելը, մեղմացնելը, դրանց հավանություն տալը կամ արդարացնելը) հոդվածներով նախատեսված հանցակազմերում օբյեկտիվ</p>	
--	--	--	--	---	--

				<p>կողմը նկարագրված է նույն կերպ: Ուստի, ելնելով վերոգրյալից՝ օբյեկտիվ կողմի բացակայության և դրանով իսկ իրավական որոշակիության սկզբունքի խնդրահարույց լինելու վերաբերյալ պնդումը, գտնում ենք, հիմնավոր չէ:</p>	
2.	<p>Հայաստանի Հանրապետության Կառավարություն</p>	<p>«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և Հայաստանի Հանրապետության օրենքի և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծերի ընդունման հիմնավորում</p>	<p>Նախագծերի ընդունման հիմնավորման մեջ ավելացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն. «Միաժամանակ, մշակույթի, գիտության, գրականության և արվեստի ստեղծագործություններում առկա բռնություն պարունակող կամ բռնության նմանվող արտահայտությունները, ինչպես նաև նման ստեղծագործությունների տարածումը բռնության կամ բռնություն գործադրելու կոչ, բռնությունը հրապարակայնորեն արդարացնել կամ քարոզել չեն կարող համարվել, և այդ արարքները չպետք է մեկնաբանվեն այս հոդվածի համատեքստում:»:</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Ընդունվել է:</p>